

ԳԻՏԱԿԱՆ ԵՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Ն. ՅԱ. ՄԱՌԻ ԾՆԵԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Ականավոր հայագետ Նիկողայոս Մառի ծննդյան 100-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ղեկավարների 21—22-րդ տեղի ունեցած գիտական նստաշրջանը:

Իացելով նստաշրջանը Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Ներսիսյանը բնութագրեց Ն. Մառին որպես ականավոր արևելագետի ու հայագետի: Նիկողայոս Մառը անգնահատելի ծառայություններ է մատուցել հայագիտությանը — ասաց նա: Հայ ժողովրդի մեծ բարեկամի անունը թանկ է հայագիտության բնագավառի բոլոր աշխատողների համար:

Ն. Մառի՝ Անիում կատարած պեղումների մասին նստաշրջանում զեկուցում կարգաց պատմ. դիտ. դոկտոր, պրոֆեսոր Բ. Առաքելյանը:

Նիկողայոս Մառը հնագիտական պեղումներ է կատարել Հայաստանի բազմաթիվ վայրերում՝ Դվինում, Գառնիում, Դերեգի ձորում, Արագածի և Դեղամա լեռների լանջերին, Վանում և այլուր, սակայն նրա կատարած բոլոր հնագիտական աշխատանքների պսակը կաղմում են Անիի պեղումները:

Ն. Մառը Անիում պեղեց քաղաքի միջնաբերդը՝ Բագրատունիների հսկա պալատի մնացորդներով, եկեղեցիներով, բաղնիքով և այլ շենքերով, Ս. Գրիգոր անունով տաճարը, որը Գագիկ արքան կառուցել էր արդեն կործանված Զվարթնոցի օրինակով, Առաքելոց, Փրկչի, Բաղդղիկի և այլ եկեղեցիներ՝ իրենց շրջապատով: Պեղվեց նաև Անիի հույակապ հյուրանոցներից մեկը և մի իջևանատուն, աշխարհիկ շենքեր, ձիթաններ, Անիի գլխավոր փողոցը իր շենքերով, արհեստանոց-կուղպակներով, ջրմուղի գծերով: Ուսումնասիրվեցին Անիի պարիսպները, քարայրները, կյանքն ու կենցաղը: Մառը պեղեց խղճուկ թաղամասեր, որոնք բացահայտեցին հակադրությունը հյուղականների և շքեղ պալատների միջև: Մառի պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ հնագիտական նյութեր, որոնք հսկայական նշանակություն ունեցան ոչ միայն Հայաստանի, Կովկասի, այլև Մերձավոր Արևելքի միջնադարյան քաղաքի ներքին կյանքը, տնտեսությունը, մշակույթը և այլ քաղաքների ու երկրների հետ ունեցած կապերը լուսաբանելու տեսակետից:

Պեղումների արդյունքները ամփոփվեցին մի քանի հրատարակությունների մեջ: Ն. Մառը, — եզրափակում է Բ. Առաքելյանը, — իր օգնա-

կանների՝ Հովսեփ Սրբելու, Թորոս Թորամանյանի և ուրիշների հետ միասին Անիի պեղումներով հսկայական աշխատանք կատարեց. հարստացրեց հայագիտությունը հար և մնայուն գործերով և արժանացավ խոր ակնածանքի և երախտագիտության:

«Ն. Յա. Մառը և հայ բանահյուսությունը» թեմային էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանի զեկուցումը:

Հայ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի շատ ուրիշ բնագավառների հետ, Ն. Մառը լուրջ ուսումնասիրության առարկա է դարձրել նաև հայոց բաղմադարյան բանահյուսության հարցերը: Մառը առաջիններից մեկն էր մեղանում — նշում է զեկուցողը, — որ գրել և ծագումնաբանորեն ու պատմականորեն հիմնավորել է հայերի՝ իրենց հեռավոր նախնիներից ստացած բանահյուսական ժառանգության կարևոր խնդիրը: Մառին է պատկանում հայկական ավանդությունների մի զգալի մասի՝ Հայաստանի նյութական մշակույթի հուշարձանների հետ ունեցած սերտ կապի և այդ ավանդությունների պահպանման ու հարստացման գործում հիշյալ հուշարձանների նշանակալից դերի բացահայտման միտքը:

Հակառակ որոշ բանագետների, որոնք հայ և ուրիշ ժողովուրդների բանավեպերի միջև եղած կապերն ու փոխհարաբերությունները մեկնաբանելիս միտվել են դեպի փոխառության կամ ազդեցության գործոնների վերհանումը, Մառը այդ երևույթի արմատները իրավացիորեն թաղված է տեսել գլխավորապես տեղական հողի մեջ, իր ուսումնասիրությունների մեջ Մառը արժարծել է բանագիտական բազմաթիվ այլ հարցեր ևս, դիտելով դրանք Հայաստանի հարևան և հեռավոր ժողովուրդների լեզվի, պատմության, հավատալիքների ու բանահյուսության հետ ունեցած կապերի ու շփման ոլորտում, ամեն անգամ այդ հարցերին տալով ինքնուրույն և ուշագրավ բացատրություններ:

Ինչպես հայագիտության մյուս հարցերի լուսաբանության ժամանակ, — ասում է Ա. Ղանալանյանը, — այնպես էլ տվյալ դեպքում, Մառին առաջնորդել է ու ստեղծագործական զորղումներ տվել այն ինքնարուխ ու անկաշառ սերը, որ տալ է նա հայ ժողովրդի պատմական ճակատագրի, նրա հին ու հզոր մշակույթի նկատմամբ:

Հայ վիճագրության ուսումնասիրության բնագավառում ակադեմիկոս Մառի վաստակի մասին զեկուցում կարդաց պատմ. գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանը: Նա ցույց

տվեց, որ Մառը հեղաշրջում մտցրեց հայ վիճագրության ուսումնասիրության մեջ, այն դեկտվեկոպական գիտության հիմքերի վրա: Մինչև Մառը, սկսած 1825 թ. մոտ 1500 արձանագրություններ են հրատարակվել, բայց բոլորն էլ պակասավոր՝ լեզվական, ուղղագրական և այլ կարգի շտկումներով, ներքին կյանքին վերաբերող տեղեկությունների աղավաղումներով կամ բաց-
ժողովումներով, որով և նրանք կորցրել են իրենց արժեքի խոշոր մասը լեզվաբանության, բար-
բառագիտության և մշակույթի այլ բնագավառ-
ների համար: Ն. Մառը ստեղծեց նոր մեթոդ և
հիմք դրեց արձանագրագիտական նոր դպրոցի,
որի ներկայացուցիչները և՛ իրենից հետո Հ.
Սրբելին, Աշխ. Քալանթարը և ուրիշներ:

Բանասիրական գիտ. թեկնածու Պ. Մուրադ-
յանը հավաստում է Ն. Յա. Մառի կատարած
ակնառու դերը հայ-վրացական բանասիրության
բնագավառում: Արևելագետների հետաքրքրու-
թյունը հայ-վրացական բանասիրության նկատ-
մամբ պայմանավորված էր մի շարք հուշար-
ձանների հայերեն և վրացերեն խմբագրություն-
ների համադիր ուսումնասիրության անհրաժեշ-
տությամբ, այդ ժողովուրդների մշակութային
փոխհարաբերության պարզաբանման լայն արե-
վելագիտական նշանակությամբ: Մառի գործու-
նեությամբ հայ-վրացական բանասիրությունը
դուրս է գալիս միայն պատմական սկզբնաղ-
բյուրների ուսումնասիրությունից և ներառում
գիտության այլ բնագավառներ՝ լեզվաբանություն,
մատենագրություն, ճարտարապետություն, վի-
ճագրություն, ազգագրություն: Մառը առաջին
անգամ հայտնաբերեց և հրատարակեց պատ-
մա-գեղարվեստական հուշարձաններ, որոնք ա-
ռաջնակարգ նշանակություն ունեն ինչպես հայ,
այնպես էլ վրաց մշակույթի պատմության հա-
մար: Բոլոր հրատարակությունները կատարվում
էին գիտական կայուն սկզբունքներով՝ բնագրի
վերականգնում, զուգահիշ ուսերեն թարգմա-
նություն, տեքստաբանական պատմա-բանասի-
րական քննություն, որ կատարվում էր ինչպես
գրավոր լրացուցիչ աղբյուրների, այնպես էլ վի-
ճագրության, ազգագրության, լեզվի ու բանա-
հյուսության տվյալների համադրմամբ:

Նշանավոր գիտնականը առաջինը քննեց հայ
քաղկեդոնականների պատմությունը, նրանց
ստեղծագործությունները, այդ հոդի վրա առա-
ջացած հայ-վրաց-բյուզանդական պատմական-
մշակութային փոխհարաբերությունները: Նրան
է պատկանում «արքայունների» առեղծվածի լու-
ծումը: Մառյան հայ-վրացական բանասիրու-
թյունը դարձավ կովկասագիտության վճռական
օղակը:

«Աղաթանդեղոսի Հայոց պատմության բանա-
հյուսական սկզբնաղբյուրների հարցի շուրջը»

թեմայով զեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Կ.
Մելիք-Սահաջանյանը: Նրկար տարիներ ուսում-
նասիրելով Ագաթանգեղոսի «Պատմությունը»,
նա հանգել է այն եզրակացության, որ այնտեղ
օգտագործված են չորս հիմնական վիպական
գրույցներ. ա) Արտավան Արշակունու և Արտա-
շիր Ասանյանի պատմական պայքարի բանա-
հյուսական անդրադարձումը հայ-իրանական
վիպաշխարհում:

բ) Տրդատյան վիպական ցիկլ, որի շուրջն
են հավաքված Տրդատներին ու Արտաշեսներին
վերաբերող զանազան գրույցներ:

գ) Տրդատ և Հովսիսիմե բանահյուսական սի-
րավեպը, որ բովանդակելով «հավատարիմ կնոջ»
կամ «անբիծ» կույսի վիպական մոտիվը, իր
հերթին գրական և բանահյուսական վերամշա-
կության է ենթարկված նաև հարևան ժողովուրդ-
ների մոտ:

դ) Տրդատի և Գրիգորի վիպական գրույցը՝
«Հուսավորչի վեպը», որը բովանդակելով «բարի
և չար» կամ «լուսավոր և խավարային» հերոս-
ների վիպական-առասպելական պայքարը, տար-
բեր ձևերով ու երանգներով տարածված է հին
ժողովուրդների (հայ, հույն, պարսիկ, մոնղոլ,
ռուս, սերբ և այլն) բանահյուսության մեջ:

Հայ լեզվաբանության մեջ մինչև այժմ տրված
չի եղել հայոց լեզվի նախագրային շրջանի
պատմության շատ թե քիչ հիմնավորված և գի-
տական որոշակի տվյալների վրա խարսխված
շրջաբաժանում: Եղել են միայն առանձին լեզ-
վական երևույթների առաջացման ժամանակը
որոշելու պատահական փորձեր: Եղած փաստե-
րի ընդհանրացման և նորագույն լեզվաբանական
մեթոդների, այդ թվում և մաթեմատիկական
մեթոդների կիրառման միջոցով պրոֆ. Գ. Դա-
հուկյանը «Հայոց լեզվի նախագրային շրջանի
շրջաբաժանման հարցի շուրջը» իր զեկուցման
մեջ որոշում է հայոց լեզվի առանձնակի գոյու-
թյան ժամանակը և անցած փուլերը մինչև V դ.:
հայ գրի և գրականության սկիզբը: Նա տար-
բերում է հայոց լեզվի նախագրային պատմու-
թյան երկու շրջան. ա) նախահայերենի շրջան
(մ. թ. ա. III հազարամյակի սկզբներից մինչև
II հազարամյակի վերջերը, ավելի ճիշտ՝ մինչև
XII դ. մ. թ. ա.) և բ) հնագույն հայերենի շր-
ջան (մ. թ. ա. XII դ. մինչև V դար): Նախա-
հայերենի մեջ զեկուցողը առանձնացնում է եր-
կու ենթաշրջան՝ վաղ նախահայերենի (մ. թ. ա.
III հազարամյակը) և ուշ նախահայերենի (II
հազարամյակի սկզբներից մինչև մ. թ. ա.
XII դ.): Հնագույն շրջանի զարգացման մեջ
նույնպես նա տարբերում է երկու ենթաշրջան՝
վաղ հնագույն (մ. թ. ա. XII դարից մինչև
մ. թ. ա. IV—III դդ.) և ուշ հնագույն կամ
նախագրաբարյան (մ. թ. ա. IV—III դա-

րերից մինչև մ. թ. V դարը)։ Վերջում գեկուցողը համառոտակի բնութագրեց հայոց չեղձի զարգացման նշված փուլերը՝ կանգ առնելով հատկապես հնչյունական կարևորագույն փոփոխությունների՝ բաղաձայնների հայկական տեղադրման, առաջին և երկրորդ քմայնացման, բառավերջի ձայնավորների թուլացման և անկման երևույթների ժամանակի որոշման վրա։ Ցույց տալով ա, ծ, ց, ձ, շ բաղաձայնների առաջացման մոտավոր ժամանակը, գեկուցողը նշում է, որ այդ բաղաձայնների կաղմավորման պրոցեսը ամենայն հավանականությամբ ավարտվել էր նախքան հայերի՝ կովկասյան ժողովուրդների հետ ինտենսիվ հարաբերությունների մեջ մտնելը։

Պրոֆ. Զահուկյանի գեկուցումը մտքերի աշխույժ փոխանակության առիթ տվեց։ Ելույթ ունեցան ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամներ Մ. Հասարայանը, է. Աղայանը և Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։

Հայկական միջնադարյան առակների ուսումնասիրության պատմության վերաբերյալ իր գեկուցման մեջ բանասիրական գիտ. թեկնածու Պիվադյանը նշեց, որ սիրո և պանդխտության երգերը, կենսախիղ ու շողշողուն տաղերը, բարին դրվատող, չարը մերկացնող, աշխատանքը փառաբանող, ստորությունն ու նենգությունը սպանիչ ծաղրի ենթարկող, ամբարտաճանությունները ձաղկող, լավն ու գեղեցիկը գովաբանող առակները հիրավի մեր միջնադարյան գեղարվեստական գրականության պսակն են կաղմում։

Միջնադարում մեր ժողովուրդն ստեղծել է հարուստ առակագրություն, որը սակայն մնում էր գրչագրերում ու հնատիպ հրատարակություններում մինչև 1890-ական թթ., մինչև մեծ հայագետ Նիկողայոս Մառի՝ հայկական առակներին

նվիրված եռահատոր աշխատության լույս բնծայումը, որի II և III հատորները առակների քննական բնագրերն են, իսկ I հատորը նրանց նվիրված ուսումնասիրությունը։ Մառի «Сборникъ пригъ Вардана» դասական հետազոտության մեջ առակների խորամուխ ուսումնասիրությունից դատ լուծված են միջնադարյան հայ մշակույթի պատմության շատ ու շատ կնճոռահարցեր։ Այդ աշխատությունը իր գիտական նշանակությունն ու արժեքը պահել է այսօր էլ։ Մեր բանասիրությունը հայ գրականության մեջ մի ամբողջ ճյուղի՝ հարուստ առակագրության վերհանման ու հիմնավոր ուսումնասիրության համար երախտապարտ է Նիկողայոս Մառին։

Նստաշրջանի վերջին գեկուցումը վերաբերում էր Ազաթանգեղոսի Հայոց պատմության նորահայտ արարական թարգմանությանը։ Համաշխարհային երկրորդ պատերազմից մի քանի տարի անց, — հաղորդում է գեկուցող, պատմական գիտ. թեկնածու Ա. Տեր-Ղևոնդյանը, — Սինայի Ս. Կատարինեի վանքում բեկգիացի հայագետ Ժ. Գարիթը հայտնաբերել է Ազաթանգեղոսի Պատմության արարական թարգմանությունը (1328—29 թթ.)։ Հայ բնագրի և հունական լավորենտյան օրինակի համեմատությամբ գեկուցողը ցույց է տալիս, որ այս ձեռագիրը թարգմանված է հունարենից։ Համեմատությունից պարզվում է, որ այդ ձեռագիրը ավելի հարազատ է հայ բնագրին, քան լավորենտյան օրինակին, ուստի պետք է եզրակացնել, որ այն թարգմանված է մի հին հունական օրինակից, որը լավորենտյան օրինակի աղավաղումներից շատերը չի ունեցել։ Այս բանն են ապացուցում նաև Ազաթանգեղոսի հունական թարգմանության նորահայտ տեքստերը (IX—XII դարերից)։

է. ՊԻՎԱԶՅԱՆ